ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

19 մարտի 2013թ. N ---Ա

ՈՐՈՇՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ Հ. 44 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի հ.44 հիմնական դպրոցն անվանակոչել նշանավոր պոլսահայ լրագրող, հրապարակախոս Հրանտ Դինքի անվամբ։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ««ԵՐԵՎԱՆԻ Հ. 44 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի՝ Երևան քաղաքի ավագանին որոշում է ընդունում Երևանի փողոցների, պողոտաների, հրապարակների, զբոսայգիների, ***Երևանի ենթակայության կրթական***, մշակութային և այլ կազմակերպությունների անվանումների վերաբերյալ, ուստի առաջարկվում է «Երևանի հ.44 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչել հայտնի հայ լրագրող, մտավորական, Թուրքիայում հրատարակվող միակ երկլեզու «Ակոս» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր, Թուքիայի հայ համայնքի ականավոր ներկայացուցիչ Հրանտ Դինքի անվամբ։

Կիլիկիայի Զեյթուն գյուղաքաղաքի անվամբ կոչված Զեյթուն բնակատեղիում ՀՀ Կառավարության որոշմամբ 1946թ. սեպտեմբերին Կիրզա կոչվող լեռնալանջին հիմնվում է հ.44 դպրոցը: Հայրենադարձ երեխաների համար կառուցված դպրոցը սկզբում եղել է շատ համեստ շինություն՝ կից կառուցված ուսուցչական տներով: Աշակերտական սակավ համալրման պատճառով հ.44 դպրոցը սկզբում եղել է 8-ամյա, և միայն տարիներ անց վերակազմավորվել է միջնակարգի: 1948-1949 ուստարում սկսվում է դպրոցի նոր ուսումնական շենքի կառուցումը՝ նաև դպրոցականների մասնակցությամբ: 1950-1951 ուստարում դպրոցի նորակառույց շենքն իր դռներն է բացում դպրոցականների առջև: 1971 թվականի դպրոցը տեղափոխվում է նոր շենք և մինչ օրս գործում է Մ.Ավետիսյան 89 հասցեում:

Ներկայումս դպրոցում սովորում է 592 աշակերտ։

Երևանի հ.44 հիմնական դպրոցն անվանակոչելու վերաբերյալ առաջարկություն է ներկայացվել դպրոցի մանկավարժական կոլեկտիվի կողմից, հարցի վերաբերյալ աշխատակազմի հանրակրթության վարչության կողմից ներկայացվել է դրական կարծիք։

Հաշվի առնելով վերոգրյալը Երևանի ավագանու քննարկմանն է ներկայացվում ««Երևանի հ.44 հիմնական դպրոց պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագիծը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

««ԵՐԵՎԱՆԻ Հ. 44 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու ««Երևան քաղաքի հ.44 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ եվ/կամ/ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

««ԵՐԵՎԱՆԻ Հ. 44 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ»ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

««Երևան քաղաքի հ.44 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ